ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<06>> հուլիսի 2026թ. N ՄՈ/386 -Ա

ք. Արմավիր

«ՔԱՐԱԿԵՐՏԻ N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԻԹԵՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վարդիթեր Պապոյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդիթեր Պապոյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 14-ը ներառյալ, 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վարդիթեր Պապոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լիաննա Մանուկյանին:
3. «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լիաննա Մանուկյանի աշխատավարձի վճարումը 2026

թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 14-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Վարդիթեր Պապոյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**